

Տի Կարսի

Ստեփանյան

Կենտրոն

9(47 925)

17-52

6165

19 Aug 2006
19 AUG 2011

առ. Ս. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ և Ե. ՄԿՐՏԻԶԵԱՆՑԻ:

(47.925)

7-52

Ուսում չունեմ վառ տեղից,
Որ պարզ յայտնեմ խօսքերըս,
Կամ թէ ուսման կանխկից,
Գրեմ նոր նոր երգերըս:
Դիվանի

Բ Ի Պ Ա Տ Կ Ե Ր
Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Կ Ե Ա Ն Ք Ի Ց



ВНЕШНИЙ
МИНИСТЕРСТВО
ВООРУЖЕННЫХ
Сил
Аналогичный Науч
СССР

Ե Ր Գ Ի 2 Գ Ի Ի Ա Ն Ի


Բ Ա Գ Ո Ր
Տպարան Ն. Երևանցիների
1913

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Ուզում եմ հրկու խօսք յայտնել յարգելի կարթացողներին իմ այս փոքրիկ պատմութեան մասին և թէ ինչպէս եմ հաւաքել այս ցաւալի անցքերը եւ ինքս իմ ոտով գնացել եմ Սարիղամիշ, Կաղիզման և Ղարս քաղաքները ու գրել եմ այս անւան տէր մարդկանցից. Ասատուր Գրիգորեանց Գարմունջ գիւղացի, Հլղաթ Պետրոսեանց Անշալ գիւղացի, Գրիգոր Պօղոսեանց վանեցի:

Իմ այս փոքրիկ պատմութիւնը գրել եմ այս մարդկանցից, որոնք իրանց հասակը հասցրել են 80 տարեկանի: Այդ ծերունի հայերը գախթիւ են իրանց ծըննդդավայրերից և ընակուում են այդ քաղաքներում: Իսկ իմ պատմութիւնը պատմում է շատ հին ժամանակներից, որի ժամանակ իրենք, այդ ծեր մարդիկ, հազիւ լինէին հինգ հասակի մէջ. բայց իրանք էլ իմացել են իրանց հայրերից, իրանց հարեան ծերերից, որ նրանք պատմում էին օջախի մօտ նստած ինչպէս ժողովրդական առակի պէս թէ իրանք ինչ կեանք են անցկացրել, ինչ տանջանքներ են քաշել և թէ ինչեր են արել այդ սնիրաւ բարբարոս քիւրդ բէկերը հայերի դէմ— եւ էլ չի ուզեցայ ցաւով ննջել իմ այս պատմութիւնը առա և լոյս տւի փոքրիկ պատմութեանս աչքերին:

Երգիչ Դիւանի



ՀԱՅԻ ԱՀՄԱՆ ԲԷԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ԴԷՄ
1830 թ.

Հաջի Ահմադ բէկը մէկ անբարոյական մարդ էր, ամեն քայլում յայտնի աւազակ, նա էլ մեր հայոց ազգի համար: Հաջի Ահմադ բէկին ունեւ 500 ասկեարներ: Մէկ օր հարիւր ասկեարներ ճամպեց Ախլաթի գաւառի Կարմունջ գիւղը, որ գնացէք այն գիւղում մէկ հայ կայ Մուրադ անունով, բերէք ինձ մօտ: Եւ ասկարները լսելով իրենց տիրոջ խօսքին, ճամպայ ընկան դէպի Կարմունջ գիւղը: Երբ որ հասան Կարմունջ գիւղին հարցրեց ն մէկ երեխայից թէ ո՞րն է Մուրադի տունը. երեխան ցոյց տւեց Մուրադի տունը. ասկեարները գնացին մօտն Մուրադի տունը: Մուրադը տեսնելով ասկեարներին, տեղից վեր ցատկեց և խորին գլուխ տալով հրաւիրեց ներս մտնել: Բայց ասկեարները մերժելով նրան ասացին. քեզ հետ գործ ունենք մէկ բոպէ դուրս արի: Մուրադը այդ պատասխանին մնաց ապշած. և դողալով մօտեցաւ ասկեարներին և ասկեարների հարիւրապետը հրամայեց զինւորներին, որ իսկոյն շղթայակապ անեն Մուրադի ձեռն ու ոտը: Եւ շղթայակապ արին ու վերցրին տարան Հաջի Ահմադ բէկի մօտ: Երբ հասան Հաջի Ահմադ բէկի տուն, Մուրադին տարան գցեցին մէկ մութ խոնու բնատ: Եւ ասկեարները լուր տւին խանին, որ բերել ենք քո ցանկացած մարդը: Խանը հրամայեց իրեն մօտ տանեն: Գնացին և բերին մուրադին. Մուրադը երբ

մտաւ Հաջի Ահմադ բէկի սենեակը, ծոռակ չոքեց և արտասուեց ասելով.—մեծ արքայ ես ինչ մեղաց տեր եմ, որ շղթայակալ էք արել իմ ձեռն ու ոտը.—Լոկը դարչելի գողան—ասաց բէկը—քանի ժամանակ է հայի քաղցը փողից չեմ կերել, կարող ես 500 հարիւր մանեթ տալ, որ քեզ արձակեմ: Մուրադը հեկեկալով ասաց, մեծ արքայ որտեղից է ինձ հինգ հարիւր մանեթ. հաւատացիր մեր ստեղծող Ալահին, որ չեմ կարողանում երեսնաներիս էլ կերակրեմ: Հաջի Ահմադ բէկը բարկանալով հրամայեց, Կորեցէք այդ անիրաւի աջ թևը: Եւ դահիճները իսկոյն Կորեցին խեղճ ողորմելի աջ թևը: Մուրադը ուշաթափ հղաւ մէկ ժամի չափ և երփ ուշքի բերին աչքերը բացեց և տեսաւ որ խան մահմուդի տղին էլ է այդտեղ, Հաջի Ահմադ բէկի մօտ: Հաջի Ահմադ բէկը տեսնելով Մուրադին աչքերը բացեց և ասաց. հը, լաւ ես թէ չէ, գալիս ես խօստուծիս թէ այդ մէկ թևդ էլ կտրեմ: Ասաց եթէ վիզս էլ կտրել տաս ինձ կողակէ չունեմ: Խան Մահմուդի տղին ասաց. Հաջի Ահմադ բէկին—քեզ բոլորովին խիղճ չունես Աստածդ մոռացել ես, ինչու այդ խեղճ երկդասարդի թևը կտրել ես—Հա, հա, հա, հա, ծիծաղելով ասաց Հաջի Ահմադ բէկը,—միթէ դու չգիտես, որ հայի փողը, հայի մալը, ինչքան անուշ է լիւնում մեզ համար: Հաջի Ահմադ բէկը կանչեց ասկարբաշուն և ասաց. տարէք, տարէք այս թշուառականին քիչ հեռու բաց թուղեցէք, թողէք զնա և պատրաստի փող բերի: Մուրադին տարան գիւղից ցածրում բաց թողեցին մէկ թևանի և ասացին—զնա ձեր հայերին, որ խրատ դառնաս: Մուրադը եկաւ իր գիւղը և վախենալուց Հաճի Ահմադ բէկից հաւաքեց իր տուն ու տեղը փախաւ դէպի ուստատտանի երկիրները: Այդ յիշեալ խան Մահմուդի տղին մէկ շատ բարեսիրտ մարդ

էր, դա էլ սուլթան Մաջիթի ժամանակն էր. այդ խան Մահմուդի տղան Բադալ խան բէկի վեզիրներ այսինքը գիտականը: Այդ Բադալ խան բէկը այնքան ուժեղ էր, որ Սուլթան Մաջիթին խաբը չէր տալիս. հակառակ կողմը անցնելուց առաջարկում էր կռիւ: Պատմելով, որ այդ Բադալ խան բէկին ութսուն հազար հրացան ունէր այն էլ հին հրացաններից, որ կոչւում էր չախմախլու:

Մէկ օր այդ Բադալ խան բէկը կանչեց իր մօտ, Խան Մահմուդի տղին ասելով, որ կգնաս Հախլաթ գաւառի, Ծղակ գիւղը Պետրոս քոխին այսինքը տանուտէրին շղթայակալ կրեւես ինձ մօտ:

Բադալ խան բէկի խօսքերը լսելուն պէս, խան Մահմուդի տղան 60 ասկիարներ զինեց, որ զնա Ծղակ գիւղը Պետրոս քոխին բռնելու խան Մահմուդի տղան եկաւ իր ասկիարներով Վանա քաղաքից դամի նստեց եկաւ հասաւ Ծղակ գիւղը: Թոքը քաշեց դամին կանգնեց: Գիւղից ժողովուրդը դուրս թափւեցին, որ տեսնեն այդ ինչ գիւղին է: Գնացին տեսան, որ խան Մահմուդի տղան իր 60 ասկիարներով իջաւ Ծղակ գիւղում. գիւղացիք խորին գլուխ տալով, համեցէք արին գիւղը: Եւ խան Մահմուդի տղան զնաց Ծղակ գիւղում կանգնեց, ոչ մէկ լուր չյայտնած, ժողովրդին ով որ ձեռքն էր ընկնում բռնում էր ականջները կարում բաց թողնում: Պատմելով, որ 32 մարդկանց ականջներ էր կտրել նա էլ երկու ականջները:

Այդտեղից դարձաւ հրամայեց, որ բռնեն Պետրոս քոխին և 60 ասկիարները այս ու այն կողմ ընկնելով, բռնեցին Պետրոս քոխին և բերին. խան Մահմուդի տղան դառնալով ասած Պետրոս քոխին, որ գալ խան բէկը հրամայել է որ 300 ոսկի տա ոսկին արժէ 100 դուրուշ) եթէ չես տալ քո և

Այդտեղից դարձաւ հրամայեց, որ բռնեն Պետրոս քոխին և 60 ասկիարները այս ու այն կողմ ընկնելով, բռնեցին Պետրոս քոխին և բերին. խան Մահմուդի տղան դառնալով ասած Պետրոս քոխին, որ գալ խան բէկը հրամայել է որ 300 ոսկի տա ոսկին արժէ 100 դուրուշ) եթէ չես տալ քո և

դուն պիտի սրի անցկացնենք: Պետրոս քոխան դառնալով ասաց՝ մեծ արքայ այ իմ ունեցած չունեցածս, այս սնդուկիս մէջն է: Ըստուգիր տես թէ ինչ որ կայ վերցըու տար: Խան Մահմուդի տղան հրամայեց ասկեալներին որ վերցնեն սնդուկը և շղթայով կապեն Պետրոս քոխին: Եւ իսկոյն շղթայակապ արին Պետրոս քոխին և առան սնդուկը և Պետրոս քոխին գնացին Բաղալ խան բէկի մօտ:

Բաղալ խան բէկը երկու օր յառաջ, իմացել էր խան Մահմուդի տղի գործողութիւնը ժողովուրդի դէմ, բարկացաւ ասիւով՝ քեզ ով է հրամայել, որ այդ խեղճ ժողովրդի ականջները կտրես: Եւ բէկը խղճալով Պետրոս քոխին, ասաց. գնա քեզ բախշեցի, գնա հանգիստ ապրիր և իմ կեանքիս համար աղօթք արա: Իսկ այն սնդուկը խան Մահմուդի տղան Բաղալ խան բէկին ցոյց չէր տւել և Պետրոս փոխան էլ, վախից չէր պահանջում իր սնդուկը. այդպիսով, թողեց իր սնդուկը, եղած չեղած փողը միջին և այդտեղից դուրս եկաւ գէպի իր գիւղը շնորհակալ լինելով Բաղալ խան բէկից:

Երեք ամսից յետոյ, Մուշ, Բաղէշ և Ախլաթ գաւառների հայ ժողովուրդը մի խնդիր գրեցին և տարին ներկայացրին Սուլթան Մաջիթին: (Ահա խնդրագրի գրածքը):

«Մեր տէր ու տիրական մեծ արքայ. առաջինը ցանկանում ենք Ձեր թագաւորութիւնը բարձր լինի, երկրորդը՝ այս բան չէ, որ Բաղալ խան բէկը և խան Մահմուդի տղան մեր հայ ժողովուրդի վրայ գործում է, եթէ դու ես թագաւորը Տաճկաստանի, մեզ փրկիր այս դառը ցաւերից, թէ չէ Բաղալ խան բէկը և խան Մահմուդի տղան է թագաւոր, գնանք նրան հպատակուհանք: Ինչու զուր տեղից մեր խեղճ ժողովրդի ականջ-

ները կտրել է տալիս: Սուլթան Մաջիթը տաս հազար ասկալներ հաւաքեց, գնաց Ջզիր բուլթան Բաղալխան բէկի և Խան մահմուդի տղի վրայ:

Բաղալ խան բէկը լսելով Սուլթանի տաս հազար ասկալների ձայնը իսկոյն կանչեց Բաղալ խան բէկը խան մահմուդի աղին, որ Սուլթան Մաջիթը հաւաքել է տաս հազար ասկալներ և անպատճառ մեզ վրայ կուի է գալու, պատրաստութիւն տեսնենք այդ դործի համար: Սուլթան Մաջիթի ասկեալների գլխաւորը այսինքը հրամանատարը եղել է Օսման փաշան: Եւ այդտեղ այդ Բաղալ խան բէկի և խան Մահմուդի տղի գործողութիւնը տեսան հայերը, իսկոյն իմացան, որ պատրաստութիւն են տեսնում կուի համար, հայերը իսկոյն գնում են Օսման փաշա ընտանիք և պատմում են, որ Բաղալ խան բէկը և խան Մահմուդի տղան պատրաստութիւն են տեսնում կուի համար: Օսման փաշան այդ խօսքերից օգտւելով, հաւաքեց իր տասը հազար ասկեալները, եկաւ նրանց վրայ կուի:

Բաղալ խան բէկը չունէր թնդանօթ, իսկ Սուլթան Մաջիթին ունէր: Օսման փաշան իր տասն հազար ասկեալներով և թնդանօթներով եկաւ պաշարեց Բաղալ խան բէկի ու խան Մահմուդի տղի ասկեալների չորս կողմը և սկսեց անխնա կոտորել: Կուիը տեսեց ուղիղ մէկ ամիս: Բաղալ խան բէկի և խան Մահմուդի տղի ասկեալներ թիւը, որը կլինէր մօտ հինգ հազար, դրանցից որը փախաւ, որը գերի ընկաւ և որն էլ սպանւեց: Վերջապէս Օսման փաշան զրաւելով Ջզիր բուլթանը որը պատկանում էր Բաղալ խան բէկին և որը բոլորովին խաբժ չէր տալիս Սուլթան Մաջիթին, մէկ փլակ գարկից այդ հողերի մէջ և անւանեց Սուլթան Մաջիթի երկիր:

Օսման փաշան յաղթելուց յետոյ մտաւ Բաղալ

խան բէկի և խան Մահմուդի տղի բերդը ու չորս կողմից պաշարեց: Նրանք իրանց յաղթուած համարելով, եկան թասլիք (հպատակ) եղան Օսման փաշային: Օսման փաշան էլ նրանց շխթայելով, ասկեարի կէս մասը թողեց Ջզիր բուլթա բերթի մէջ, իսկ միւս կէս մասը վերցնելով, Բաղալ խան բէկին և խան Մահմուդի տղին տարաւ Ըստամբուլ, Սուլթանին ներկայացնելու:

Երբ Օսման փաշան եկաւ Ախլաթ գաւառը, այդ տեղի հայերը մէկ խնդրագիր էին գրել, որ հանձնէին փաշային. բայց նրանք երկիւղ կրելով չէին համարձակում ներկայացնելին. այդ լսելով մի հայ կին, Ախլաթ գաւառից, որի անունն էր Խմու, ինքը հանձն առեց տանել այդ նամակը հանցնել Օսման փաշին, և այդպէս էլ արեց: Կինը առաւ այդ խնդրագիրը և տարեց ներկայացրեց փաշին: Ահա թէ ինչ էր խնդրագրի մէջի գրածը:

«Մեծ արքայ Օսման փաշայ, Բաղալ խան բէկը և խան Մահմուդի տղան մեզ տեւ է չարաչար տանջանքներ և կտրել է բազմաթիւ մարդկանց ականջները ու ձեռքերը»:

Գարմուռնջ գիւղում, Ախլաթ գաւառում, Օսման փաշան հայերի այդ խնդրագիրը կարդալուց յետոյ հրամայեց ասկեարներին, որ հարիւր հոգի յետ դառնան դէպի Ջզիր բուլթան և այնտեղի ասկեարներին էլ իմաց տան, որ գնան քարուքանդ անեն Բաղալ խան բէկի ու խան Մահմուդի տղի ամբողջ տունն ու տեղը. իսկ ինքը այդ շղթայաւճներին տարաւ Ըստամբուլ, ներկայացրեց Սուլթան Մաջիդին: Այնժամանակ Սուլթան Մաջիդը հրամայեց, Բաղալ խան բէկին և խան Մահմուդի տղին տանեն գցեն մի առանձին սենեակ, որը լինի շատ մութը և խոնավ. ու միքանի

պահապան ասկեարներ որոշեց, պատեն այդ սենեակի շուրջը, որ այդտեղից նրանք չփախչին:

Այդտեղ Օսման փաշան տարաւ իր ասկեարները թաբիսների (հողը քանդած է և մէջում բնակում են) մէջ արաւ, որ հանգստանան ու կերակրեն. իսկ ինքը գնաց Սուլթան Մաջիդի մօտ:

Սուլթանը Մաջիդը տեսնելով Օսման փաշին, հրաւրեց իր սենեակը և առաջարկեց, իր պատմէ Բաղալ խան բէկի և խան Մահմուդի տղի բերդերից ու հոցերից: Օսման փաշան ասաց—Մեծ արքայ գրաւել եմ ամբողջ երկրները և բերդերը ու ասկեարների կէս մասը թողել եմ Ջզիր բուլթա բերդերի մէջ, մի քանի ամիս պահպանեն, որ բիշ ժողովուրդը կհանդատանայ՝ բերել կտանք:

Սուլթան Մաջիթը կանչեց Բաղալ խան բէկին և խան Մահմուդի տղին ու ասաց—Ձեզ զօրապետի պաշտօն կտամ, բայց որոշել էի գլխատել տալ ձեզ:

ՄԻՐՉԱԲէկի ԳՈՐԾՈՂՈՒԹԻԻՆԸ 1800 թ.

Այս Միրզաբէկը, Խալիլ բէկի տղան է և Խալիլ բէկն էլ յիշեալ հաջի Ահմադ բէկի հօրեղբայրն է: Այս յիշեալ Միրզաբէկը իրան ունէր 300 ասկեարներ սուրը զարցնելով դէպի հայերին, դէպի Տարոն գաւառը, սլսեց անխնայ կոտորել հայ գիւղացիներին, Խե գիւղից սկսած անցան մինչև Բուլանլըղի գաւառը: Վերջը հասաւ Լիզ գիւղը, գիշերը շրջապատեց այդ գիւղը և գիշերը մէկ քրդի կնոջ ուժով, բերել տեց իր մօտ, որը պատմելով շատ գեղեցիկ է եղել: Եւ այդ Միրզաբէկը մտադիր էր, որ այդ գիշերը լոյսը րացելուն՝ կոտորել հայերին: Այդ գիշերը հայերը իմա-

նալով Միրզաբէկի սրտի գաղտնիքը, հայերը ծածուկ մարդ ուղարկեցին Շաբան փաշի մօտ և այդ յիշեալ փաշան էլ կոչուում էր Սուլթան Մաջլիթի ասկեարներէ հրամանատարը: Հայերի պատգամաւորը գնաց Շաբան փաշի մօտ, խնդրեց նրանից ասելով, որ ես Լիզ գիւղի մօտակայ գիւղորանքից եմ. Միրզաբէկը իր երեք հարիւր ասկարներով եկել է Լիզ գիւղից մէկ քրդի կնոջ փախցրելու մտադիր է, որ հարձակւի մօտակա հայ գիւղացիների վրայ. հայերը ինձ ուղարկել են քեզ խնդրելու, որ մեր կեանքը փրկես Միրզաբէկի սրի բերնից: Շաբան փաշան էլ լսելով այդ հայի խօսքերը, ասկեարների կէս մասը վերցրեց եկաւ Լիզ գիւղը և տեսաւ, որ Միրզաբէկը շրջապատել է Լիզ գիւղը: Միրզաբէկը Վալի փաշայի ասկեարները տեսնելուն պէս սկսեց հրացան արձակել դէպի Վալի փաշի ասկեարների վրայ: Վալի փաշան մարդ ուղարկեց Միրզաբէկի մօտ, որ թող գայ ինձ մօտ բան ունեմ ասելու: Միրզաբէկը մերժեց Վալի փաշի խօքը ասելով, որ ես ինչ գործ ունիմ Վալի փաշի մօտ: Ասկեարը դառնալով եկաւ Վալի փաշի մօտ պատմելով, որ մերժեց ձեր հրամանը: Վալի փաշան կրկին մէկ նամակ գրեց, ուղարկեց Միրզաբէկի վրայ: Այս էր միջի գըրլա՞ծը. «այս գիւղորանքից դուրս արա թէ չէ մեծ բաժինդ ականջդ կ'իջնես»: Ասկեարը այդ նամակ տարաւ տեց Միրզաբէկին: Միրզաբէկը կարդալուց յետոյ մտածեց տեսաւ, որ Վալի փաշայի ասկեարները բաւականին շատ են, ելաւ այդ գիւղից ձամբայ ընկաւ դէպի իր երկիրը:

Մշու գաւառը, Ավզութ գիւղում. Միրզաբէկը ապրում էր այդ գիւղում:

Շատ ժամանակներ անցան. օրւայ մէկ օր Սուլթան Մաջլիթից հրաման եկաւ Միրզաբէկի վրայ, որ

այդ Մշու գաւառում մէկ աւաղակ քուրդ կայ անունը Փագի Ռուլէյման գնա նրան բռնիր և շղթայեակապ բեր ինձ մօտ: Միրզաբէկն էլ Սուլթան Մաջլիթի հրամանով ելաւ իր ասկեարների հետ գնաց այդ յիշեալ աւաղակին որոնելու:

Միրզաբէկը գիշեր ցերեկ ճանապարհ գնաց մինչև հասաւ Բաղեշ քաղաքի մօտակայ մէկ սարում, հանդիպեց Փագի Սուլէյմանին: Միրզաբէկը տեսնելով Փագի Սուլէյմանին ձայն տուց. Փագի Սուլէյման Փագի Սուլէյման քանի որ կեանքիդ վերջ չեմ տւել, արի և ինձ հպատակիր: Լաւ, ասաց Փագի Սուլէյմանը, Բայց երդւիր մեր ստեղծող Ալլահի անունով, որ վրտանդ չունիմ քեզին՝ ուրախութեամբ կ'հպատակեմ քեզ: Միրզաբէկն էլ երդեց կեղծ սրտով. և երբ որ Փագի Սուլէյմանը հրացանը ուղղեց և խփեց Միրզաբէկին, բայց դժբախտաբար բռնեց Միրզաբէկի աջ ոտքից և Փագի Սուլէյմանը դարձեալ փախաւ:

Այն սարի հետեւ ինչքան որ Միրզաբէկի ասկեարները ընկան Փագի Սուլէյմանի հետեւից բայց ապարդիւն անցաւ չը կարողացան ձարել Փագի Սուլէյմանին. բայց Միրզաբէկին վերաւոր համարելով, ասկեարները վերցրին և բերին տուն, հասաւ սեւ անդունդին և վախճանեց. հիմա էլ իր տղա Մուսաբէկը կանգնեց իր հօր տեղը և Միրզաբէկն էլ զօրապետն եղաւ Մուշ գաւառում, որ Մուսաբէկը կանգնեց իր հօր տեղը ելաւ իր ասկեարներով ընկաւ հայ գիւղորանքը, թէ որ իմ հայր Միրզաբէկը եղել է զօրապետ հիմա նա վախճանել է ես կ'կանգնեմ իմ հօր Միրզաբէկի տեղը և կ'կատարեմ իմ հօր պաշտօնը ինչ որ կատարում էր իմ հայր Միրզաբէկը:

Այդ յիշեալ Մուսաբէկը ելաւ իր ասկեարներով եկաւ Արգաւանք գիւղը, որ հայերի բերնից թուխթ

առնէ. գնաց իջաւ Արգաւանք գիւղում և հայերին մէկ մէկ կանչեց իր մօտ. այդ գիւղում մէկ ծեր մարդ կար Օհան անուանով մօտ ութսուն տարեկան: Այդ յիշեալ Օհանն էլ Արգաւանք գիւղումն էր: Առաջաւոր Մուսարէկը կանչեց Օհանին իր մօտ և ասելով նրան որ ձեր գիւղի ժողովրդի բերնից, այսինքն լեզուից մէկ թուխթ գրեցէք տէք, որ ես գնամ իմ հօր պաշտօնը վայել եմ բայց Օհանը Մուսարէկի առաջարկութիւնը մերժեց ասելով, որ մենք ձեր ազգը վաղուց ենք ճանաչում, մենք քեզ թուղթ չենք տալ: Մուսարէկը լըսելով Օհանի սառը պատասխանը ասաց. ըսպասիր տես թէ ինչ գրութեան մէջ կ'գցեմ ձեր գիւղի վիճակը: Ասաւ ու անցաւ գնաց այդ յիշեալ Օհանը ելաւ Արգաւանք գիւղից Օսմանլի հագուստով, գնաց Վալի փաշի մօտ:

Այդ Օհանը այն հագուստը հագել էր այն պատճառով, որ չի ճանանչէ Մուսարէկը. գնում էր Վալի փաշի մօտ այն նպատակով, որ ասէ թէ մենք չենք ուղում Մուսարէկին. որ նա մեզ վերա իշխէ: Այդտեղ էլ ծածուկ մարդ է գնում Մուսարէկի մօտ, որ Օհանը գնացել է Բաղէշ Վալի փաշին մօտ. և իսկոյն Մուսարէկը ձին հեծաւ իր ասկեարներէ. հետ եկաւ Բաղէշ քաղաքը բայց Օհանը օսմանլուի. հաքուստում էր, չէր ճանաչում Մուսարէկը:

Այն ժամանակ, որ գնացել էին լրտեսել Մուսարէկին, Օհանը գնում է Վալի փաշին մօտ, (այդ լրտեսողն էլ հայ է եղել և Մուսարէկի հետ եկել էր Բաղէշ քաղաք) երբ որ Օհանը իջաւ Բաղէշ քաղաքում գնաց մտաւ մէկ սրճարան, նստեց մի բաժակ թէյ խմելու և յանկարծ յիշեալ լրտեսող հայը եկաւ մտաւ սրճարանը, բարեկց Օհանին և նստեց մօտը: Հարցրեց երբ ես գնալու. դիւղը, Օհանը ասաց. քիչ գործ ունիմ այս

տեղ, դեռ յայտնի չէ, այդ հայը դուրս եկաւ սրճարանից և վազեց դէպի Մուսարէկի մօտ, տեսաւ որ մուսարէկը նոր է իջնում ձիուց. և պատմեց, որ Օհանը այն ինչ սրճարանում թէյ է խմում: Եւ Մուսարէկը իսկոյն ձին նստաւ, այդ հայի հետ եկաւ մտաւ այդ սրճարանը: Մուսարէկը ձեռքերը կրծքին դրեց ու խորին զուլա տաւ Օհանին: Օհանը ասեց ինչ ես ուզում Մուսարէկ, ինչու չես տեղդ նստում: Մուսարէկը պատասխանեց, որ քեզ պէս պարոնը այստեղ լինելուց ինչպէս ես համարձակեմ նստեմ քեզ մօտ: Օհանը ասեց միթէ նոր ես իմանում որ պարոն եմ: Օհանը թէյը խմելուց յետոյ, վեր կացաւ սրճարանից դուրս եկաւ գնաց իր հիւրատունը, Մուսարէկն էլ վեր կացաւ գնաց իր ասկեարներէ մէկ քանիսին պահապան դրեց քաղաքի վրայ, Օհանը գնալուց շուտ իրեն իմաց տան: Օհանն էլ տեսաւ որ Մուսարէկը իր հետեից եկել է, էլ չկարողացաւ գնալ և գանդաւուել Վալի փաշին: Լոյսը բացւելուն պէս Օհանը ճանապարհ ընկաւ դէպի իր գիւղը: Եւ այստեղ Մուսարէկին ասկեարները տեսնելով Օհանին իսկոյն շտապելոյն յայտնելու Վալի փաշին: Վալի փաշան էլ վերցրեց իր ասկեարները և շուտ հասաւ Օհանի յետեից: Վալի փաշան այնտեղ Օհանի յետեից հասաւ, տեսաւ, որ նա մտաւ Կօտնի գիւղը. դա էլ քրդի գիւղ է: Օհանը գնաց իջաւ, մէկ մօլա կար նորա տանը մուսափիր (հիւր) եղաւ, բայց այդտեղ Մուսարէկը տեսնելով Օհանին, որ մտաւ մօլի տունը գիւղի ցածրում ըսպասում է մինչև կէս գիշերին յարձակում է այդ յիշեալ մօլի տանը վրայ և տեսնում է որ Օհանը կրակ է վառել և նստել մօտը Մուսարէկը գնաց ջուխտ ձեռքը սրտին դրեց և կանգնեց Օհանի առաջ. Օհանը ասեց. բաւական չէ Մուսարէկ քեզ ինչ ես ուզում, ուր ես եկել այս կէս գիշեր

ըրին: Մուսարէկը խորին գլուխ տուա Օհանին և ասաց. քեզ պէս սղան, որ նստած լինի իհարկէ ինձ պէս ծառան էլ պիտի ձեռները սրտին դրած խոնարհ կանգնի քեզ մօտ: Իհարկէ, պատասխանեց Օհանը, միթէ նոր ես իմանում: Մուսարէկը դռանց, անիրաւ կանգնիր ոտի, Օհանը ասաց—ինչի ես եմ կանգնում ոտի, քանի որ դու ես կանգնած. այդ տան տէրը, մօլան եկաւ խնդրեց Մուսարէկին, որ իմ տանս արիւն մի թափիր, սպասիր մինչև առաւօտ, որ Օհանը այստեղից դուրս կըգայ, ինչ որ կուզես անպէս էլ կանես: Մուսա բէկը հրացանի հետևով մէկ անգամ խփեց այդ մօլին ասելով, որ քո ինչ բանն է: Վերջը այդ Մուսաբէկը իր ասկեարներին հրամայեց, որ կրակը լաւ չաղացնեն, և կրակի մօտ երեք փետ խորեն. իսկոյն կատարեցին ասկեարները Մուսարէկի հրամանը: Բերին ուժով Օհանին ամեն մէկ ձեռը կապեցին մէկ փայտից և ջուխտ ոտքերն էլ կապեցին մէկ փայտից և Օհանի պատկերը ուժով քաշեցին կրակի վրայ և ետ քաշեցին. այնքան այդպէս արին, որ Օհանի ամբողջ մարմինը վառեցին և այդտեղ Օհանը մահացաւ և տարան նորան ոսկորները գիւղից դուրս, ածեցին ճահապարհի վրայ:

Մուսարէկը այդ գիւղից իր ասկեարներին հետ ճանապարհ ընկաւ, գնաց հասաւ մէկ հայի գիւղ անունն է Աղէն, մշու դաւառը, և մտնում է այդ գիւղը օրը ցերեկով փախցնում է Միրօյի աղջկանը և վերցնում է իր հետ տանում իր տունը և մէկ ամիս պահելուց հետոյ այդ յիշեալ Միրօն մի խնդրագիր գրեց տեւեց հայոց առաջնորդին նա էլ ելաւ գնաց Վալի փաշի մօտ խնդրեց, որ այսպէս բան չի լինիլ, որ Մուսարէկը գործում է հայերի դէմ. բայց Վալի փաշան մերժեց հայոց առաջնորդի խնդրքը ասելով, որ

աղջիկը իր յօժար կամքովն է գնացել, բայց հայոց առաջնորդը ասաց, որ բերէք աղջկանից հարցնենք և Վալի փաշան առաջնորդի խօսքով ելաւ մարդ ճամբեց Մուսարէկի մօտ, որ այդ աղջիկը ուղարկի գա Մուշ:

Երբ որ գնացին Մուսարէկին առաջարկեցին նա ասաց—Ես աղջիկ չեմ ուղարկիլ Մուշ. գնա ասիր ինչ որ ուզում էք անյնպէս էլ ինձ արէք, բայց ես ձեզ կին չեմ տալ:

Վալի փաշի ասկեարը գնաց պատմեց փաշին, որ Մուսարէկը ձեր առաջարկը մերժեց, բայց այդ հայ աղջիկը Մուսարէկին ասաց. մուսարէկ, քանի մէկ մնանք թակ կացած քանի որ ես քեզ սիրում եմ արի գնանք Մուշ, ես ինքս կասեմ հայոց առաջնորդին, որ ես հայ եմ եղել հիմա սիրում եմ մուսարէկին և սիրում եմ մուսաւլմանութիւնը: Մուսարէկը լսելով այդ կեղծ խօսքերին ելաւ քանի ասկեարներին հետ և աղջկանը առաւ եկաւ Մուշ Վալի փաշի մօտ: Երբ փաշան տեսաւ Մուսարէկին և աղջկանը մարդ ճամբեց որ հայոց Առաջնորդը գայ:

Իսկոյն հայոց առաջնորդը եկաւ և Վալի փաշան կանչեց աղջկանը ու հարցրեց.—աղջիկըս ում օրէնքն ես ուզում հայի օրէնքը թէ մուսաւլմանի օրէնք: Այդ հայ աղջիկը տեսնելով հայի առաջնորդին փաշի մօտ նստած չորեչոր գնաց առաջնորդի ոտքը պաչեց ասեց.—որ ես հայ եմ և հայի օրէնքից չեմ դառնալ: Մուսարէկը ինձ ուժով փախցրեց տարաւ իր տունը: Այդտեղ փաշան էլ իմացաւ աղջկա հայ լինելը և Մուսարէկի ուժով տանելը: Հեռագիր տւին Ըստամբուլ սուլթան Մաջլիդին, որ Մուսարէկը այդ աղջկանը բաց չի թողնում, իսկ աղջիկն էլ չի ուզում գնալ Հրաման եկաւ Սուլթան Մաջլիդից, որ այդ աղջկանը և Մուսարէկին բերէք ինձ մօտ: Վալի փաշան լսելով Սուլթան

Մաջիթի հրամանը, կանչեց քանի ասկերներ և հը-
րամայեց Մուսաբէկին ու այդ աղջկանը տանեն Ըս-
տանբուլ յանձնեն Սուլթան Մաջիդին: Ասկերներն էլ
տարան և ներկայացրին Սուլթան Մաջիդին: Նա կան-
չեց Խնդիզի և Ռուսաց դեսպանին և տարաւ իր մօտ
հրամայեց, որ աղջկան և Մուսաբէկին տանեն իրան
գատարանը: Երբ տարան ներկայացրին գատարանի
մէջ Սուլթանին: Սուլթանը ասաց. «աղջիկս դու բոլո-
րովին երկիւղ մի անիր ինչ ազգից ես և ինչ օրէնք
ես ուզում բոլորը այստեղ յայտնիր ինձ ես քեզ կա-
դատեմ:»

Այդ հայի աղջիկը այդ խօսքերի վրայ չօքեց Սուլ-
թանի առջ և արտասուելով ասաց. — ես հայ եմ և
հայի արգանդից ծնած, Մուսաբէկը ինձ ուժով ծեծե-
լով տարաւ իր տունը:

Սուլթան մաջիթը հրամայեց որ շղթայեն Մուս-
աբէկի ձեռն ու ոտը և իսկոյն էլ շղթայեցին և ու-
ղարկեցին Մէկքա Մեդինա, իսկ հայի աղջկանը ու-
ղարկեցին իւր հօրը տունը, իսկ Մուսաբէկը այդ աք-
սորավայրում մնալով քանի տարիներ կրկին ուղար-
կեցին իր հայրենիքը և դարձեալ սկսեց իր գործո-
ղութիւնները:

Սուլթան Մաջիթը վախճանելուց յետոյ գահը
ընկնում է Սուլթան Համիդի ձեռքը: 1874 թւականին
Սուլթան Համիդը հրաման ուղարկեց Մուստաֆա փա-
շի և Իսմայիլ փաշի վրայ, որ տասը հազար ասկերա-
ներ հաւաքեն և գնան Համադ գաւառը, որի կէս մասը
թողնել Զեթկան գիւղում իսկ կէսը մասն էլ թողնել
Մալիսէյման խասուուր գիւղում. մտադիր էր կռելու
ռուսաց հետ:


Մուստաֆա փաշան և Իսմայիլ փաշան լսելով

Սուլթան Համիդի հրամանով հաւաքեցին իրենց ասկերա-
ները և գնացին այդ յիշեալ գիւղերում իջան և գետնի
վրայ թաքիսներ փորեցին մտան մէջը: Իսկ ռուսաց
զօրքի հրամանատարը եղիւ է Տէր Ղուկասովը, որը
հաւաքելով երկու հարիւր հազար զօրք գալիս է բը-
նակում Բայազետում: Սուլթան Համիդի ասկերները
լսելով Տէր Ղուկասովի երկու հարիւր հազար զօրքի
ձայնը սարսափ տիրեց զրանց վրայ, փախան այս ու
այն կողմը, իսկ Տէր Ղուկասովը մէկ շաբաթ մնալով
Բայազետ զօրք հաւաքեց եկաւ բնակեց Ղարաքիլիսա
իսկ Սուլթան Համիդը հրաման ուղարկեց Մուստաֆա
փաշի և Իսմայիլ փաշի վրայ, որ ինչպէս հրամանատար
էք, որ զօրքը ձեր ձեռքիցը փախչում է, շուտով հա-
ւաքիր ասկերները և զուրս արի կռի գաշտ:

Իսկ Տէր Ղուկասովը մէկ ամիս էլ մնալով Ղա-
րաքիլիսա, այդտեղից էլ հաւաքեց զօրքը եկաւ բնակ-
ւեց Զեթկան գիւղում. և այդտեղ մեծ անազին բեր-
դեր պատրաստեց կռի համար: Մուստաֆա փա-
շան և Իսմայիլ փաշան դարձեալ հաւաքեցին իրենց
տասը հազար զօրքը և եկան բնակեցին Զլի գետգո-
ղում, թաքիսների մէջ: Այդտեղ հայտնեց երկու թա-
գաւորների կռիւը՝ Սուլթան Համիդի և ռուսաց թա-
ղաւորին:

1874 թ. յուլիսի տասնը հինգին կռիւ գաշտում
Մուստաֆա փաշան և Իսմայիլ փաշան զոհ տուցին ի-
րենցից հինգ հազար հօգի. իսկ միւս հինգ հազար զօրքը
վերցնելով փախաւ էջըրում: Այստեղ Մուստաֆա փա-
շան իր ասկերները, դարձրեց քսան հազար. իսկ
Տէր-Ղուկասովը այդ Զլի գետիկը գրաւելուց յետոյ
բերդերը ամրացրեց մնաց այդտեղ: Իսկ Բայազետ քա-
ղաքի մէջ բնակող չորս հազար ասկերներից, երկու
հարիւրը հայեր էին:

61248-6



Շաբա՛ն փաշան և Իսմայիլ փաշան կրկին աւելացնելով իրենց ասկեաւորները դարձրին վաթսուն հազար հոգի: Եւ հարձակելով Բայազեդու մէջ ընկաւող չորս հարիւր զօրքի վրայ, ոռւսաց զօրքը փոքրաթիւ լինելով խոյս տւին կռից, մտան Բայազեդու բերդի մէջ, որի հիմքը դրել էր Մահմուդ փաշան, իսկ Շաբա՛ն փաշան իր ասկեաւորներով պաշարեց այդ բերդի չորս բոլորը:

Ռուսաց զօրքից երկու հարիւրը, որ հայեր էին, զբաղեցրեց հրեսուն հոգին չկարողացան մտնել բերդի մէջ, փախան Բայազեդ մէկ հայի տուն: իսկ այդ տան մէջ էլ մարդ չլինելով, որոնք սաբսափից փախել էին: Այդտեղում կար մի բէկ Շավեյի Շափանդի անունով, տեսնելով որ այդ երեսուն հոգին մտան այդ տան մէջ, իսկոյն գնում է յայտնում Շաբա՛ն փաշին, որ Ռուսաց զօրքից երեսուն հոգի մտան այս ինչ հայի տունը: Շաբա՛ն փաշան հրամայում է հինգ հարիւր ասկեաւորի, որ գնան զբանց սրի անցկացնեն: Ասկեաւորները լսելով Շաբա՛ն փաշի հրամանը, իսկոյն գնացին այդ տան վրայ կռիւ:

Շաբա՛ն փաշի հինգ հարիւր ասկեաւորները երեսուն հոգու գիմաց փախան, թողնելով բաւականին դիակներ: Գնացին և պատմեցին Շաբա՛ն փաշին, որ տունը պտտիկ է իսկ կռուողները երեսում է, որ չափազանց շատ են՝ չկարողացանք ներս մտնել:

Շաբա՛ն փաշան հրամայեց, որ գնան տունը մի կերպ այրին: Ասկեաւորները վերադառնալով կրկին դէպի այդ տան վրայ ու բաւականին զոհ տալուց յետոյ, հազիւ հաս կարողացան կրակել տունը չորս կողմից: և այդտեղ մահացան երեսուն հոգին: Բայց զարմացան Շաբա՛ն փաշի ասկեաւորները երբ տեսան, որ ձայնը հազիւ լինի քսան երեսուն հոգու: Վառեցին այդ տունը և մոխիր դարձրին:

Այնտեղ բերդի միջի հարիւր հօթանասուն զօրքը որը պաշարել էր Շաբա՛ն փաշան, այդ զօրքի հրամամանատարը, որ էր մի պալիովնիկ, ասաց. — Ինչ առնենք. ոչ միանգամից գրաւում են բերդը, որ հանգստանանք և ոչ թոյլ են տալիս, որ դուրս դանք ազատւենք. այստեղ սովամահ կլինենք բոլորս: Ոչ մէկ զինւոր այդ հարիւր հօթանասուն զինւորներից չկարողացան պատասխանել այդ պալիովնիկին բացի մի հայ զինւորից, որի անունն էր Սամսոն. նա ասաց. — Ձերդ մեծութիւն, ես կարող եմ Ձեզ այս բերդի միջից ազատել, եթէ ինձ իրաւունք տաք:

Պալիովնիկը իրաւունք տուեց այդ զինւորին, որ եթէ իրեն այդտեղից ազատէ, ինչ որ ցանկանայ, տալ նրան պարգև: Սամսոնը ասաց, որ մէկ նամակ գրիր քո լեզւից՝ ես տանեմ և հանձնեմ Տէր-Ղուկասովին, որը դեռ իր զօրքով մնում էր Զլի գեղուկում:

Պալիովնիկը շատ հաւանեց ու մի նամակ գրեց Տէր-Ղուկասովի վրայ և հանձնեց Սամսոնին:

Սամսոնն պոկեց իր թևերի պագոնները, գլխաւոր կը փոխեց վերջը ափսոսանքով և անցրեց իրան, որ ոչ ոք չէր կարող երեւակայել որ դա զինւոր էր: Ու այդ բերդի վերեւից տեղ է լինում ջուր վերցնելու կամ թէ դուրսը մտիկ տալու, այդտեղից գիշերը դուրս է գալիս և մտնում է քաղաքի մէջ: Այդտեղից գիշերով ճանապարհ է ընկնում դէպի մէկ քիւրդի գիւղ, որի անունըն է Քրդաղիւղ. Սամսոնը չի մտնում այդ գիւղը այլ մի ծառի տակ սպասում է մինչև որ լինում է առաւօտայ ժամի չորսը և այդ գիւղից լոյսով ճանապարհ է ընկնում գնում հասնում Նահնու գաւառի իւշ Բիլիսեա (Երեք եկեղեցի) վանքը. այդ վանքը պատրաստել է Գրիգոր Լուսաւորիչը Տրդատ Թագաւորի ժամանակ, այդ վանքում ապրում էր Առաքն և

Գրիգոր վարդապետները. իսկ առաջնորդը եղել է Օհաննէսը: Սամսոնը այդ վանքումը մնում է մինչև, որ մութը տիրում է, ապա այդտեղից ճանապարհ ընկնում գէպի Ջլի գեղուկ՝ Տէր-Ղուկասովի մօտ:

Երեկոյան հասնում է Ջլի գեղուկ. ներկայանալով Տէր-Ղուկասովին, հանում է ծոցից նամակը և տալիս նրան: Այդ օրը Տէր-Ղուկասովի զօրքը կուսել էր Ղուրդ Իսմայիլ և Մուխտար փաշաների հետ: Սամսոնը երբ նամակը տւեց Տէր-Ղուկասովին, զօրքը նոր էր վերադառնել կուսից և դեռ չէին ճաշել:

Տէր-Ղուկասովը նամակը կարդալուց յետոյ իսկոյն հրամայում է զօրքին իւրաքանչիւր չափի առաջ կրակ վառեն, որ ամեն տեղից էլ երևայ. և կրակը վառելուց յետոյ հրամայեց, որ ամբողջ պատերազմի մթերքները բարձեն սայլերին, ճանապարհելու Բայազեդ: Կրակը վառելուց յետոյ բոլոր մթերքները բարձեցին սայլերին և ճանապարհ ընգան գէպի Բայազեդ:

Մուխթար և Իսմայիլ փաշաները իմանալով Տէր-Ղուկասովի Բայազեդ գնալը, իրանք էլ պատրաստուցին ու ճանապարհւեցին նրանց հետևից: Ռսաց զօրքը գնաց իջաւ Ջեթկան գիւղը. իսկ վերոյիշեալ փաշաների ասկեարները գնացին և շրջապատեցին Տէր-Ղուկասովի զօրքի շուրս կողմը: Տէր-Ղուկասովը Ջեթկան գիւղից. իսկ փաշաների ասկեարները Մարտո ձորից, Ռամադա սարից, սկսեցին թնդանթներով կուսիլ. իսկ այդ կուսի ժամանակ Ջեթկան գիւղից, հայերը փախան թողնելով իրանց տունը և կարողութիւնը, այդտեղ հինգ օր կուսելուց յետոյ, Տէր-Ղուկասովի զօրքը ճանապարհ ընկաւ գէպի Մալի Սուլէյման գիւղը, այդտեղ Տէր-Ղուկասովի զօրքը չըիջաւ այլ անցաւ այդ գիւղից և գնաց գէպի Բօշիկ գիւղը. իսկ վերոյիշեալ փաշաների ասկեալները Տէր-Ղուկասովի զօրքի հե-

տևից գնում էին: Երբ Տէր-Ղուկասովի զօրքը Ջեթկան գիւղից ճանապարհւեց, կրկին քրդերը սկսեցին թալանել հայերի տները:

Տէր-Ղուկասովի զօրքը հասաւ Բօշիկ գիւղը, և իջաւ այդ գիւղում. բայց Մուխթար և Իսմայիլ փաշաների ասկեարները կրկին եկան և պաշարեցին նրանց շուրս կողմը:

Մալի Սուլէյման գիւղում քրդերը թալանել էին հայերի տները. այդ գիւղից մի քանի հօգի՝ Աստուածատուր, Սարգիս և Գարբիէլ, սրանք գնացին Իսմայիլ փաշի մօտ. տեսնելով, որ նամազի վրայ է, սպասեցին մինչև նամազը վերջացրեց. այնժամանակ նրանք լալով ընկան Իսմայիլ փաշի ոտքերը:

— Կանգնեցէք տեսնեմ ինչ էք ուզում, որտեղից էք, պատմեցէք տեսնեմ ինչ է եղել ձեզ. — ասաց Իսմայիլ փաշան:

Հայերը կանգնեցին ոտքի և ասացին.

— Հօր արքայ, մենք Ձեզ ինչ ենք արել, Ձեր թագաւորութիւնը հաստադ մնայ և մինք հնազանդ ծառաներ Ձեզ. սա ինչ բան է, որ քրդերը թալանում են մեր ապրանքը, վառում են մեր տունը, տանում են մեր կին ու աղջիկները:

Իսմայիլ փաշան ասաց, — հիմա դուք այստեղ էք, թէ փախել էք Ռուսաստան:

Պատասխանեցին. — Ոչ, դեռ ձեր իշխանութեան տակ ենք գտնուում:

Իսմայիլ փաշան նոյն լոպէին հրաման ուղարկեց իր ասկեարներին մի քանիսի հետ, որ գնան քրդերին գտնեն, հայերին չնեղացնելու համար, որ հայերը կըրկին գան և իրանց գիւղերում ընակութիւն հաստադեն:

Տէր-Ղուկասովը Բօշիկ գիւղից ճանապարհւեց գէ-

պի Բայազեդը. իսկ Մուխթար և Իսմայիլ փաշաների ասկեարներն էլ կրկին Տէր-Ղուկասովի զօրքի հետեից գնում էին: Ձեթկան, Բօշիկ և միքանի ուրիշ գիւղերի հայերն էլ հաւաքւեցին և Տէր-Ղուկասովի հետ գնացին Բայազեդ:

Տէր-Ղուկասովը գնաց իջաւ Օրգով սարի վրայ, որը ուռւաց հողն էր. իսկ այդ հայերին ճանապարհեց զէպի ուսաց հողերի ապահով կողմերը: Իսկ ինքը զօրքի կէս մասը վերցնելով գնաց Բայազեդ: Փաշաները տեսնելով, որ Տէր-Ղուկասովը իջավ Օրգով սարի վրայ, իրանք այդտեղ չիջան այլ ուղղակի գնացին Բայազեդի բերդի վրայ:

Տէր-Ղուկասովը երբ գնաց հասաւ Բայազեդ և տեսաւ, որ բերդը չորս կողմից պաշարել են: Սկսեց թնդանօթներ արձակել զէպի բէրդի պաշարող զօրքի վրայ իսկ բերդի մէջի զինուորները իմանալով որ թընդանօթ արձակողները իրանց զօրքերիցն են, իրանք էլ ոգևորւած սկսեցին ներսից կրակել քիւրդ ասկեարների կրայ: Տէր-Ղուկասովի հրամանով կռիւը խիստ գոյն ըստացաւ: Վերջիվերջոյ Տէր-Ղուկասովը յաղգեց, բերդը ազատեց պաշարումից և բերդի միջի զօրքն էլ եկաւ. միացաւ Տէր-Ղուկասովի հետ:

Տէր-Ղուկասովը մուխթար և Իսմայիլ փաշաների ասկեարներից չորս հարիւր հօգի գերի վերցնելով և չորս թնդանօթ խլելով կրկին վերադառնաւ Օրգով:

Իսկ այն հիշեալ Սամսունը, որ նամակը տարել էր Տէր-Ղուկասովին տեւի, այդտեղ Տէր-Ղուկասովն ել խոստացել էր Սամսունին մէկ ընծայ տալ. բայց յայտնի չէ տեւի են թէ ոչ: Այդքանը պատմութիւնը մեզ չի հասել: Իսկ այդ հիշեալ Սամսունը, յարգելի կարգացողներ, ներողութիւն մէկ քանի բան հմ տաւեացնում այս Սամսունի մասին, որովհետեւ այդ Սամսունը

շատ գործողութիւններ է ունեցել իր շրջանում և լաւ անուն է հռչակել. կարգացողներից կարելի է շատերը իմանան, իսկ կարելի է մէկ քանիսն էլ չիմանան. այդ հիշեալ Սամսունը, ողորմած հօգի Բաֆֆու հիշեալ Խէնթն է, որը իր ամբողջ գլխով վէպերի մէջ գլխաւոր հերոսը և պատմութեան ծաղիկը Խէնթն է: Ահա այս քանի տողն է մեզ հասել այդ Սամսունի մասին և մենք պարտաւոր ենք յայտնել նրա ու լինելը:



ԵՐԿ ԴԱԼԱՂՇԼԱՂՅԻ ԱՂԱԼԱՐԻՆ:

Երբ մահւան լուրըդ հասաւ մեր հայերիս
Սեւ արտասունքը թափաւ իմ աչերիս
Քաջ աղալարի պէս երիտասարդին
Հրացան է արձակել չար թշնամին:

Հայեր լացէք Աղալար
Արտասունքով դու մի լար
Զեռնիդ բռնի հրացան
Չար թշնամուց վրէժ առ:

Ամեն կուրի մէջ դու հաստադ կուեցիր
Չար թշնամուն էլ խոտի պէս հնձեցիր
Հայաստանից Գանձակ և Շուշի քաղաք,
Ավազակներին արեւ էք խայտառակ:

Քաջ հայ ազգին զինեցիր
Շուտով զիրքեր բռնեցիր
Քիւրդ և տաճիկ ցեղերին
Կրակի պէս վառեցիր:

Ղալաղչաղը շատ ախուր ցափում է
Քաջեր պահելով նա միշտ տանջւում է
Կեցցես Ղալաղչաղ որ ունիս քաջեր
Առիւծի պէս Աղալար կտրիչներ:

Ղալաղչաղ իմացէք
Առիւծ կանչելով լացէք
Չէալ քաջ Աղալարը
Թշնամին ճանաչեցէք

Գնացէք Աղալար, Առուշ գնացէք
Հայ ազգի շարհարանքները թողեցէք
Երգիչ Դիվան խփիր սազիդ լարերին,
Հայեր հիշէք անմահ Աղալարին:

Հայեր շուտ շատպեցէք
Զէնք ու փամփուշտ կապեցէք
Քաջ Աղալար Առուշի
Խորհուրդը կատարեցէք:

ԱՓՍՈՍ ՉԵՆ ՀԱՐՅՆՈՒՄ

Ափսոս չեն հարցնում ինձնից
Կուշտ ես, սոված ես թէ ծարաւ
Սովամահ դառած երգիչից
Մի խօսք հարցնող չեղաւ:

Տեսայ, որ մնում եմ քաղցած
Փաթաթեցի զրիչս ու թուղթս
Կանչեցի ով Տէր Աստուած
Շուտով կատարիր իմ ուխտս:

Որոշեցի մէկ օր գնամ
Մէկ իշխանի ոտքերն ընկնեմ
Գուցէ մէկ բարգւ ըստանամ
Էլ զրիչի հեռքից չընգնեմ:

Ինձնից առաջ էլ շատ կային
յայտնի մարդից գրողներ
Մեռած վախտը այն սև շային
Թէ առն, թէ կայք, այդ սև փողն էր:

Վերջը երկար մտածելուց
Զը որոշեցի ոչ մէկ բան
Հայ հարուստին խնդրելուց
Չեն էլ հասնիլ օգնութեան

Ուզեցի երբէք չը գրեմ
Գնիչս է ժանգոտում
Ում մօտ գնամ խնդրեմ
Շատ բանի եմ կարօտում:

Սովամահ դառած երգիչիս
Ով է սովից փրկողը
Կամ թէ թուղթ ու գրիչիս
Ով է նոր կեանք աւողը:

Թերի մնաց փափագս
Խեղճ գլուխըս ուր դարկեմ
Նորից առնեմ ջիւթակըս
Հին երգերըս նուագեմ

Ու սկսեցի շարունակել
Գրել սրտիս վերքերը
Զիւթակըս առայ նուագել
Դարձեալ իմ հին երգերը

Ուսում չունեմ վառ տեղից
Որ պարզ յայտնեմ խօսքերըս
Կամ թէ ուսման կանթեղից
Գրեմ նոր նոր երգերըս

Հազիւ սրանք են դուրս գալիս
Իմ մութ խաւար կուրծքիցս
Այս եմ միայն ձեզ տալիս
Իմ խուլ կոպիտ մաքրիցըս:

Երգիչ Դիվանիս ողպալով
Ապրում եմ ես, ում նման
Խորին գլուխ ձեզ տալով
Մէկ օր կիջնեմ զերեզման:



ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԱՆՈՒՆ ԵՒ ԱԶԳԱՆՈՒՆ-
ՆԵՐԸ

Մօսկովսկոյ քանութիւններից

Եզոր Մելիքեանց—Ռնտամալցի . . .	20	կոպ.
Սարգիս Վարդանեանց—Ախորիկ գիւղացի	20	»
Յարութիւն Գորուլով—Ներքինշնացի . .	20	»
Վաղենակ Բէգլարեանց—Դամաշկեցի . .	20	»
Բէգլար Ղազարեանց—Դամաշկեցի . . .	20	»
Լեոն Բարսեղեանց—Իգդիրեցի . . .	20	»
Ասլան Դաւթեանց—Վանքցի . . .	20	»

Բախսի քանութիւններից

Մանասան Խաչատրեանց—Կսապատցի . .	20	»
Իվան Գէորգեանց—Խոտին գիւղացի . .	20	»
Յարութիւն Մարտիրոսեանց—Սղին գիւղ .	20	»
Իսակ Բուզաղեանց—Ջանաթաղեցի . . .	20	»
Արտէմ Ղազարեանց—Շուշեցի . . .	20	»

Տէր-Յակովբովի քանութիւններից

Միքայէլ Ղուկիանց—Ղալաղշաղեցի . . .	20	»
Անդրի Փարսիեանց . . .	20	»
Գերասիմ Յովակիմեան . . .	20	»
Մարտիրոս Երիմեանց—Հայաստանցի . .	20	»
Գրիգոր Տէր Կարապետեանց—Նորաշէնցի	20	»
Սամսոն Տէրտէրեանց—Աւտուռեցի . .	20	»
Ղազար Արզումանեանց—Գողթնաձորեցի . .	20	»
Աշմենակ Եաւրումեանց—մաղրասեցի . .	20	»
Գրիգոր Տէր-Բաղդասարեանց—Ազուխեցի	20	»
Միխայէլ Բաղդասարեանց—Շուշեցի . . .	20	»
Ներսէս Սերոբեանց—Միլքեանդեցի . . .	20	»
Յարութիւն Մկրտչեանց—Փուխրուզեցի	20	»
Սամսոն Ալոեանց—Նորս գիւղացի . . .	20	»

Եփրեմ Աղամալեանց—Գիւղիմիսեցի . . .	20	»
Արսէն Թումասեանց—Փուխրուզեցի . . .	20	»
Սահակ Սահակեանց—Կողինձորեցի . . .	20	»
Ալլահվերդի Սարգիսեանց—Տանձատափեցի	20	»
Աւագ Աւագեանց—Կողինձորեցի . . .	20	»
Խաչատուր Սիմէօնեանց Կողինձորեցի	20	»
Սանթուր Զաքարեանց—Փարարեցի . . .	20	»
Տիգրան Յակովբեանց—աղխեցի . . .	20	»
Երեմեա Մկրտչեանց—Փուխրուզեցի . .	20	»
Յարութիւն Սարգսեանց—Հանդ գիւղացի	20	»
Միքայէլ Օհանեանց—Գողթնաձորեցի . .	20	»
Գրիգոր Ռոստոմեանց—Խնձորեակեցի . . .	20	»
Նիկոլա Յակոբեանց—Տաթևացի . . .	20	»
Վարդան Յարութիւնեանց—Մովսէս գիւղացի	20	»
Բողի Բաբեանց—Տնձատափեցի . . .	20	»
Գէորգ Բաբեանց—Գոմրեցի . . .	20	»
Ալէքսանդր Սահակեանց—Երեցւանիկցի .	20	»
Բարիլամ Պօղոսեանց—Տող գիւղացի . .	20	»
Լեոն Սիմէօնեանց—Թաքաուրեցի . . .	20	»
Ղեզւանդ Հայրիեանց—Երիցվանիկեցի . .	20	»
Սարգիս Մարտիրոսեանց—Չափնեցի . .	20	»
Ներսէս Յովհաննիսեանց—Ղափանցի . . .	20	»
Գէորգ Ն. Յովհաննիսեան . . .	20	»

Սաույասնիկի քանութիւններից

Գրիգոր Բաբաջանեանց—Շուշեցի . . .	20	»
Նիկոլա Միլք-Ջանեանց—Շուշեցի . . .	20	»
Թովմաս Լալազարեանց—Լոռեցի . . .	22	»
Բէգլար Քոչարեանց—Երեանցի . . .	20	»
Հայրապետ Առաքելեանց—Պարսկաստանցի	20	»
Նիկոլայ Գրիգորեանց—Պարսկաստանցի .	20	»
Ջհանգիր Դաւթեանց—Պարսկաստանցի	20	»
Մանուէլ Սողոմոնեանց—Ղալաղշաղեցի	20	»
Յովհաննէս Յարութիւնեանց—Հանդ գիւղացի	20	»

Աշարեան ընկերութեան քանութիւններէց

Եւսանդ Յարութիւնեանց—Ախլաթեանցի	20	»
Յովհաննէս Ղուկասեանց—Ախլաթեանցի	20	»
Տիկոշ Յովհաննիսեանց—Լորեցի	20	»
Աւետիս Մելքոնեանց—Հլտեցի	29	»
Մակառ Սարգսեանց—Լոռեցի	20	»
Սմբատ Եղիազարեանց—Հաշատեցի	20	»
Մարքարա Գրիգորեանց—Լոռեցի	20	»
Սարգիս Մարտիրոսեան—Շիրազեցի	20	»
Մկրտիչ Տէր Գրիգորեանց—Լորեցի	20	»
Արշակ Յակովբեանց—Կթաթաղցի	20	»
Աբկար Միխայէլեանց—Տղեցի	20	»
Դաւիթ Արզումանեանց—Գետաթաղցի	20	»
Լեւոն Յակովբեանց—Մաղրեցի	20	»
Բաղո Աբկարեանց—Տլորսեցի	20	»
Դանիէլ Գալստեանց—Պուստեցի	20	»
Ռուբէն Արշամեանց—Խոնձուրսկեցի	20	»

Սարուխանովի քանութիւններէց

Խաչատուր Մինասեանց—մաղանջուղեցի	20	»
Մադաթ Մկրտչեանց—մաղանջուղեցի	20	»
Պետրոս Աբրահամեանց—Փիրջամալեանցի	20	»
Սարիբէկ Առաքելեանց Ղուրբուլաղցի	20	»
Համբարձում Հայրապետեանց—Խոտեցի	20	»
Մկրտիչ Հայրապետեանց—Փառուղեցի	20	»
Արտաւազդ Տէր Դանիէլեանց—Փիրջամալցի	20	»
Յովհաննէս Միրզաեանց—Զէյվցի	20	»
Եարամիշ Սարգիսեանց—Ախլաթեանցի	20	»
Եփրեմ Մանուկեանց—բնուսուսեցի	20	»
Գէորգ Մկրտչեանց—Զէյվցի	20	»
Մանուշար Սուլէյմանեանց—Տղեցի	20	»
Մանգասար Մելիքսէթեանց—զալաղլաղեցի	20	»
Յովակիմ Սարգիսեանց—Լոռեցի	20	»

Միրզոնի քանութիւններէց (50 ուլ.)

Խաչատուր Վարդանեանց—Քարաւառեցի	20	»
Պակովիչ Աւետիքեանց—Ծաղկունքեցի	20	»
Արմենակ Մանուկեանց (վնցի) Բերգերեցի	20	»
Ասիբէկ Միխայելեանց—Ծաղկունքեցի	20	»
Արզուման Ա. Յակովբեանց—Քելլուսեցի	20	»
Արշակ Հայրապետեանց—Աղսեցի	20	»
Աւետիս Յակովբեանց—Փայտաշուկցի	20	»
Գալուստ Ռոստոմեանց—Դարարացի	20	»
Յովհաննէս Մանուկեանց—բերգերեցի	20	»

Բուսսիկի նէֆիսի քանութիւններէց

Աղաբէկ Վարդանեանց—Դամաշեցի	20	»
Իվան մկրտչեանց Ծաղկունքեցի	20	»
Շամիր Օհաննիսեան—Ան գիւղացի	20	»
Արշակ Կիրակոսեանց—Ծաղկունքեցի	20	»

Մանքաշովի քանութիւններէց ջալիչ

Մոսես մուսաէլեանց—Թաղավարթցի	20	»
Ռուբէն Ալլահաբեգիեանց—քարահունջեցի	20	»
Սայիադ Մկրտչեանց—ծաղկունքեցի	20	»
Ղանուշ Դաւիթեանց—սեքարեցի	20	»
Վասիլ Ղալուսեանց—սեքարեցի	20	»

Ալի Բալա Դադաշովի քանութիւններէց

Վարդան Օհանջանեանց—զէյվցի	20	»
Մկրտիչ Դգրիգորեանց—զէյվցի	20	»
Վանուշ Առաքելեանց—փառուղեցի	20	»
Աղազիւ Նահապետեանց	20	»
Միրզա Մնացականեանց—զէյվցի	20	»
Ռուբէն Մնէեանց—փառուղեցի	20	»

12 43 Բունովի քանութիւններէց

Մինաս Օհանեանց զալաղլաղեցի	20	»
Ծատուր Մկրտչեանց—խոտեցի	20	»

Սուլթան Գալստեանց—Կալերեցի	20	»
Տիկ. Ասադիկ Գալստեանց—Կալերեցի	20	»
Սարգիս զրիգորեանց—Ղալաղշաղեցի	20	»
Մանուկ Ալէքսանդր Ղարաեանց—Նորգեղացի	20	»
Արշակ Աբրահամեանց—Նիժեցի	20	»
Մելիք Կիկիեանց	20	»
Ներսէս Գէորգեանց	20	»
Լևոն Տէր-Պետրոսեանց—Ազոխեցի	20	»
Գերասիմ Յարութիւնեանց—Ղշաղեցի	20	»
Դաւիթ Ղազարեանց—Դժմաշէնցի	20	»
Մելքոն Աւետիսեանց—Դժմաշէնցի	20	»
Արզուման Սարգսեանց	20	»
Զհանգիր Յարութիւնեանց—Գողթուղեցի	20	»
Արամ Տէր Վարդանեանց—Տաւրանեցի	20	»
Հայրապետ Գէորգեանց—Փուրխուղեցի	20	»
Վարդան Բալիւրէկեան Արզաբեանց Տուորսեցի	20	»
Կրասիլնիկովի քանոններէց		
Լևոն Գրիգորեանց—Ղալաղշաղեցի	20	»
Ենգիրար Աղաջանեանց	20	»
Միրզա Փարսիեանց	20	»
Շահրման Իսախանեանց	20	»
Սարգիս Համբարձումեանց	20	»
Գալուստ Անդոնեանց	20	»
Յակովբէան Մարգարեանց	20	»
Առուստամ Դաւիթեանց—Քերթեցի	20	»



